ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«01» դեկտեմբեր 2016թ. N 111
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԲԱՂՐԱՄՅԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԲԱԺՆՈՒՄ ԱՈՒԴԻՏ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, երկրորդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N143-Ն հրամանի պահանջները.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. 2016 թվականի ներքին աուդիտի հաստատված ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի Բաղրամյանի սոցիալական աջակցության տարածքային գործակալությունում և Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական եվ սոցիալ-տնտեսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնում անցկացնել 2016 թվականի բյուջետային տարվա գործունեության աուդիտ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ Արայիկ Հակոբյանի, գլխավոր մասնագետներ Սրապիոն Մարտիրոսյանի, Վիգեն Խաչատրյանի և Հայկ Պողոսյանի կողմից:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետին (Ա.Հակոբյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի Բաղրամյանի սոցիալական աջակցության տարածքային գործակալության տնօրենին և Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական եվ սոցիալ-տնտեսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետին (համաձայնությամբ) :

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետին (Ա.Հակոբյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել 17 աշխատանքային օրյա ժամկետում:

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (պետ Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:

5. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Փ. Կարապետյանին:

6. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ